26 ԿԼ յԱղէքսանդրիա նաւել 'ի Կոստանդինուպոլիս։ Իսկ Կիրակոս եպիսկոպոս ձեռնտուութեամբ ազգայնոց արդիւնաւորէր զկալուածս բարեկարգ կառաւորութեամբ, և 'ի նմին ամի առաքեաց յԵրուսաղէմ պարէնս 5,300 դահեկանի, եւ ունէր առ իւր պատրաստ 14,000 դահեկան, զի յորժամ այցելութիւն գտցէ Աթոռն, առաքեսցէ զայն։ (1827 · 'ի 27 Յունվարի)։

Այլ վասն եպիսկոպոսին երթալոյ յԵթովպիա, զոր գբրեցին վասն Աբրահամ վարդապետի, ընկալան պատասխանի թէ Գաբրիէլ Պատրիարք՝ պատուիրեալ էր նոցա, թէ 'ի կարգել նուիրակունս ծանուցանել ինքեան, և չէին կարող առանց հարցանելոյ նմա առաքել զոք յեպիսկոպոսութիւն։ այսպիսեաւ խափանեցաւ խնդիրն։ Իսկ հրաւիրակքն՝ Քրիստոնեայն գնաց յԵրուսաղէմ մնալ անդ 'ի վանս Հայոց, եւ այլազգին դարձաւ յերկիր իւր։ Եւ 'ի սոյն աւուրս եկեալ էր յեգիպտոս Շամ Դարապուլուսցի ոմն Յոյն Հռոմէական, կեցեալ յԵթովպիա զամս 19, և պատմեաց Կիրակոս Եպիսկոպոսի՝ թէ երեւելի մեծ Վէզիր նոցա, զոր Հայլի Մարիամ կոչէին, նա էր որ ջանայ եւ առաքեաց յեգիպտոս գիրս և հրաւիրակս, և այրն այն վախճանեալ, և հակառակորդք նորա այլ Բդեշխք Հապէշայ 'ի սուր մաշեալ զընտանիս և զզաւակունս նորա, տիրեցին երկրի նորին, ուստի չէր պատշաճ առ ժամն դնալ ումեք անդ, այլ նախ գրել առ Թագաւորն, եթէ հաճեսցի, ապա առաքել։ եւ Կիրակոս եպիսկոպոս ետ գրել առ Թագաւորն 'ի բարբառ արաբացւոց, պատմելով 'ի նմա զանցս Յակոբ վարդապետի և զվնասիլ նորա անձամբ և ընչիւք։ զպատճառ տարագրելոյ անտի եպիսկոպոսին Ղպթոց։ Բանզի Եպիսկոպոսունք որք դնային անդ, ըստ ամենայնի հետեւելով կամաց նոցա՝ ըստ սովորութեան նոցին կատարէին զամենայն եկեղեցական ծէս։ իսկ վերջինս այս կամեցեալ է փոփոխել ինչ ինչ եւ նոր ծէս մուծանել յեկեղեցիս նոցա, և 'ի չընդունելն Հապէշայ՝ բանադրէ զնոսա, եւ Հապէշք վառեալ բարկութեամբ հանդերձ Թագաւորաւն կամեցեալ են իսպառ 'ի բաց կալ 'ի քրիստոնէական սուրբ հաւատոյ և պաշտել զկուռս, այլ ոմանք 'ի խոհեմագունից նոցին այսուիկ շիջուցանեն զբորբոք բարկութեան նոցա,